

նանաւոր եղան իրենց բուսաբանական պարտէզներու ունեցած սաստիկ ախորժակովը . (Էրերտ եղբարքը) քսֆըրտ պարտէզ մը հաստատեցին , որ ետքը համալսարանին պարտիզին հետ միացաւ . Չէլսի քաղաքին պարտէզը , որ 1 օնտրայի դեղագործաց ընկերութեանն էր , Սիլլէրի աշխատութեամբքը շատ ծաղկեցաւ . Վիու քաղաքին մէջ 1760^{ին} հիմնուած թագաւորին առանձնական պարտէզը՝ շատ յառաջադիմեց , և Միլլէն հայր ու որդի լաւ կերպով գրուած երկու ցուցակ հրատարակեցին նոյն պարտիզին վիճակին վերայօք : Ընդդիոյ մէջ նոյն ատենուան բուսաբանութեան համար եղած ախորժակին ապացոյց մը կրնայ սեպուիլ զանազան բուսաբանական օրագիրները , որ ժողովրդեան մէջ կը պտըտէին :

Լյուս յիշուած պարտէզներուն մէջ մեր դարուն հաստատուածները ամենեւին չյիշատակեցինք . որովհետեւ հիմա Եւրոպայի ամէն քաղաքները հասարակաց ու առանձնականաց պարտէզներ լինեն , որով բուսաբանութիւնը այսօրուան օրս շատ տարբեր կերպարանք առած է՝ քան թէ ինչ որ էր , կըրնանք ըսել , կէս դար մը առաջ : Բացասկից հիմա ոչ միայն Եւրոպա այս աստիճանի ծաղկած է տնկոց մշակութիւնը , հապանաւ Եւրոպայէն դուրս ուր որ քաղաքականութիւն մտած է կամեւ

րոպացի գաղթականութիւններ կան , ինչպէս որ է բովանդակ Միւրիկան , Երեւելեան Հնդկաստան , Եւրիկէի ու Ուկրանիոյ կղզիներուն եւրոպացի գաղթականութիւնները . միով բանիւ ուր որ Եւրոպացիք օտք կոխած են , հոն ալ բուսոց մշակութիւնը մասնաւոր կերպով զարգացած է . անոր համար յետայս ընդհանրական յառաջադիմութիւնը տեսնելու պէտք չէ շատ զարմանանք՝ թէ որ կարդալու ըլլանք 1581^{ին} Բատուայի բուսաբանական պարտիզին բուսոց տեսակին թիւը միայն 400 , և 1 էյտինը 1598^{ին} 800 , և հիմա Բարիզու , Վոբէնհայի , Վիուի , Պեւլիւնի , Սոսկուայի ու Վուուինի պարտէզներունը 12-25,000 տեսակ . և այս ամէննալ , որ հիմա կը մշակուին Եւրոպայի ամենէն երեւելի բուսաբանական պարտէզներուն մէջ , դեռ քառորդը չեն այն ամէն տեսակներուն , որ բուսաբանական գրքերու մէջ ստորագրուած են :

Լյուսի բուսաբանութեան զարգացման վրայ գրելէն ետքը՝ ուրիշ յօդուածով ալ պիտի խօսինք թէ այս բուսաբանական պարտէզները ինչ ոճով կը կառավարուին , որով օր օրուան վերայ եղած թէ ընդհանուր գիտութեանը և թէ ուսանողաց դիւրին կերպով զարգանալուն յառաջադիմութիւնը կերպով մը զգալի ըլլայ :

(ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

Հ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Թ Ո Ւ Ղ Թ Դ .

Պ Ո Ղ Ի Կ Տ Ե Տ Ա Ռ Կ Ր Ա Ն Տ Ո Ր

Լատին լեզուն : Կատարկութիւններն ու պակտարիւնները :

Քանի մը ամիս կայ որ քեզի թուղթ չգրեցի . վասն զի օրն ի բուն քիչ մը դժուարին ուսումնական զբաղմունքի մը հետ եմ : Տեղւոյս ժողովրդեան օրէնքները , սովորութիւններն ու գաղափարները ճանչնալու փափաքս գոհ չեի կրնար ընել՝ առանց լեզունին հասկընալու . և ինչպէս հասկընամ՝ առանց սորվելու : Բայց այս ինչ տաժանելի ուսմունք , սիրելի հայր , ամենացոյ մը

համար . ինչ ծանր այնպիսի պատանւոյ մը համար , որ պզտիկուցմէ ի վեր միտքը դրած է թէ միայն իր հայրենի լեզուն է իրեն հարկաւոր : Մեր մատենագիրներն իրենց բնիկ լեզուն ճիսութեանը պատճառաւ՝ արտաքին աղբիւրներու երբէք կարօտութիւն չունեցան . բայց այսօրուան օրս որ բռնութիւնը ամէն բան փոխած է , պէտք է որ մեզի տիրողներուն լեզուն գործածենք , և ով որ

պաշտպանի կարօտ է՝ պէտք է ջանայ իր միտքը հասկերցնել տալու : Այն գերին , որ ուսուցիչ գրուած է ինձի , մեծ ջանքով ու համբերութեամբ կ'աշխատի : Ինձի պէս դժբաղդի մը վրայ ստացած գործով , զորն որ աւելի աղէկ վիճակի արժանի կը համարի , ու իմ վրաս տեսած քանի մը մասնաւոր բաներու յարմարութիւնը , թերեւս ասոնք են որ այգայիսի ծանր աշխատութեան մը ձանձրութիւնը կը նուազեցնեն իրեն . ես ալ իմ կողմանէս անոր փոխարէն միշտ այս լեզուին ետեւէն կըլլամ , որ ինձի ալ անպատու չեղաւ , որովհետեւ լատին մատենագիրները սկստայ կարդալ : Ամենէն աւելի պատմիչները բանիս կու գան . որովհետեւ անոնք լեզուին գծաւորութիւնները կ'ընտանեցնեն ինձի , ու շատ անագուտ հարցմունքներէ կը խալըսեն զիս , որով կրկին օգուտ կը քաղեմ : Ընտանի խօսակցութիւն մը իմանալը ինձի շատ դժուարին կու գայ . որովհետեւ խօսակցութեան լեզուն միշտ գրոց լեզուէն տարբեր է . գրաւորը կանոնաւոր է , որոշեալ ոճ մը ունի ու ճիշդ է . իսկ միւսը անկանոն , թեթեւ ու մտածութեանը համեմատ փոփոխական :

Թերեւս քեզի այնպէս մը երևնայ՝ որ շատ շուտ դատաստան կ'ընեմ այնպիսի լեզուի մը վրայ , զորն որ հազիւ թէ վեր 'ի վերոյ մը գիտեմ . և իրաւ որ այս մտածութիւնը ինչուան հիմա զիս ետ կեցուցեր էր այս բանիս վրայ քեզի գրելու : Բայց ետքը լաւ մը մտածելով ինձի երեցաւ թէ քանի որ այս լեզուին վրայ եմ , կրնամ աւելի ճիշդ բացատրել անոր դժուարութիւնները , պատճառները ճանչնալ , ու որոշել այն զանազանութիւնները , որով կը տարբերի նոր ծաղկած ժողովրդեացեան մը լեզուն՝ այդ մեր ճոխ ու վսեմ լեզուէն , զորն որ այնչափ երեւելի մատենագիրներ գործածած են : Կը համարակիմ այս ալ ըսելու՝ թէ մէկն որ յանկարծակի ինքզինքը նոր աշխարհքի մը մէջ գտնէ , պէտք է նայի որ իրեն վրայ եղած առաջին տպաւորութիւնները նկարագրէ . ինչու որ շարունակ կրկնուելուն՝ շուտով իր առջի ըմբռնածները կը գազարին . բնութեամբ ճկուն գործարաններ ունենալով քիչ ժամանակի մէջ կը վարժինք այն ամէն բանի , որ զմեզ առաջ սաստիկ կը յափշտակէր . որով եթէ քիչ մը ուշանայ մարդ իրեն առջի ունեցած զգացմունքները բացատրելու , կը մոռնայ այն բաները պատմելու , որ ըսած տեղւոյն կամ առարկայից վրայ աւելի կենդանի ու ճշմարիտ պատկեր մը կու տային : Անոր համար ես ալ միտքս դրի որ ինչուան հիմա Հռովմայեցւոց լեզուին վրայ ըրած զննութիւններս հաղորդեմ քեզի՝ միշտ մեր լեզուին հետ բաղդատելով : Դժբնե՛ր քոյն ի բնեջ Եօք Գրեթեմ Դեմի , կ'ըսենք մենք :

Հիմա նոր կ'իմանամ թէ ինչպէս հարկաւոր բան է եղեր մարգուս՝ իր լեզուն սկզբամբ գիտնալը . ես ընդհակառակն կարծեի որ մեկու մը համար բաւական է իր լեզուն մաքուր ու յստակ խօսիլը : Քանի քանի անգամ ինձի անօգուտ երեցած աշխատութենէ մը ձանձրացած՝ Այս Բնէ է , կանչեր եմ , քերականներուն ըրածը , որ այդչափ մանրամասնաբար մասունք բանին կը բացատրեն : Բայց այսօրուան օրս որ բանի կը բերեմ զանոնք՝ կ'իմա-

նամ որչափ օգտակար բան ըլլալը , որով այն՝ որ առաջ զիս կը ձանձրացնէր՝ հիմա կը քաջալերէ : Մէկն որ յաղթեր է ամէն դժուարութեանց ու մեր լեզուին նուրբ խրթնութիւնները հասկերցեր է , ուրիշ լեզուներ սորվելու համար շատ աւելի քիչ ջանք պիտի թափէ : Մեր այնչափ բազմաթիւ ճարտասաններն ու հոգեկաւոր մատենագիրները . որ ամէն առէն ունեցեր ենք , ուրիշ ազգաց մատենագրաց օրինակ եղած են , որոնք մինչև հռութեան ուսումնական բառերը մեզմէ առին : Լատին լեզուին մէջ մեր լեզուին հետքը շատ կայ : Իտալիոյ արեւելեան կողմերը , զոր մենք Եսպերիա կը կոչենք , երկար առէն իրենց գրքին պատճառաւ Յոյն գաղթականներ բնակած էին , և կրթեալ ժողովրդեան մը սովորութիւնները բնականապէս յաղթելով՝ կամաց կամաց բոլոր այն կողմերը տարածուեցան : Ուրիշ Յոյն գաղթականներ , որ շատ հին ժամանակներէ 'ի վեր Եւրոպեան կողմները հաստատուած էին , իրենց փառաւական լեզուն տարածեցին մերձակայ աֆունքը բնակող այնչափ բազմաթիւ պղտիկ ժողովրդոց մէջ , և մինչև հիմա իրենց այդ սկզբանէ հետքը կայ : Հռովմայեցւոց գործածած առաջին գիրը մեր տառերն էին . և Աւետիսնոն լերան վրայ եղած Աստղեան տաճարին մէջ , զոր Սերվիոս Տուզզիոս շինած է , այսօրուան օրս գեռ կը տեսնես Լատինաց ու Հռովմայեցւոց դաշնագրութեան ձևը պղնձէ սեան մը վրայ փորուած , և այնպիսի տառերով գրուած է , որ բոլորովին մեր տառերուն կը նմանին . նոյն տառերով է օրինաց տասուերկու տախտակներուն գրութիւնն ալ , թէպէտ և առջինին չափ հին չէ : Այսպիսի տարածուած աւանդութիւն մ'ալ կայ՝ որ Հռովմայեցւոց ու Կապեանց մէջ եղած խաղաղութեան դաշնագրութիւնը , որ Տարկուինիոս Գոռոգին ժամանակն եղած է , լատիներէն լեզուով՝ բայց մեր տառերով գրուած ըլլալ փայտէ վահանի մը վրայ , զորն որ պատեր էին այն եղանկաշուով , որ այս հաշտութեան առթով մորթեցին : Վերջապէս հռովմայեցի հնութեանց խիստ հմուտ յոյն մատենագիր մը այսպէս զուրցած է . « Հռովմայեցւոց լեզուն՝ բոլորովին բարբարոսի լեզու չէ , և ոչ ալ բոլորովին յոյն , թէպէտ և ասոր ու անոր խառնուրդ մըն է . իրեն բառերուն մեծ մասը եւրոպեան լեզուին բառերն են , բայց հնչման պատճառաւ շատ փոխուած » , Հոս ինձի կ'ըսեն որ յոյն լեզուին հետ այդ մերձաւորութիւնը առէնք աւելի զգալի էր : Քանի որ լատիներէնը երթալով կատարելագործուեցաւ , իրեն սեփական յատկութիւններ ստացաւ , անանկ որ հիմա օտար լեզուաց հետք շատ քիչ կ'երևնայ մէջը : Իսկ ինչ որ Հռովմայեցիք 'ի Յունաց առին , մեծամեծ փոփոխութիւններ վրանին եղած է : Մեր հագագային հնչմանց տեղ քանի մը մասնաւոր գրեր հնարեցին , որոնք մեր այբուբենին մէջ չկան . և այս փոփոխութիւններով է որ շատ անգամ յոյն ու լատին բառերուն նմանութիւնը կը կորսուի , անանկ որ երկայն քննութիւններէ վերջը հազիւ կրնաս գտնել :

(ԿԸ ԸՅՐՈՒՆԵՎՈՒՒ)

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ